# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունիսի 12-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/6/1 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «30» 04 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,*** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև ***2025թ. հունիսի 12-ին կնքված «ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծակքարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների*** պետական գնման N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/6/1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **8,730,799.00 (ութ միլիոն յոթ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր իննսունինը)** ՀՀ դրամ, որից **2,730,799.00** (երկու միլիոն յոթ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր իննսունինը) ՀՀ դրամ, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, | Հասցե՝Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան |
| Կ.Ուլնեցու 31 | 2 փ. 3 նրբ. տ. 14 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 08624633 |
| Հ/Հ՝ 900011058832 | Հ/h՝ 220203335934000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Սարգիս Բաղինյան | Ն. Մուրադյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |